Հավելված 2
Չարենցավան համայնքի ղեկավարի

2026 թվականի հուլիսի 09–ի N 745-Լ որոշման

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ու Թ Յ Ու Ն

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ / ծածկագիր 3.1-1/:

Թափուր պաշտոնն առաջացել է 2026 թվականի փետրվարի 02-ին՝ հրաման N 14, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետի հիմքով:

Թափուր պաշտոնի անձնագիրը, մրցույթի թեստավորման փուլի համար կազմված հարցաշարերը, հարցազրույցի փուլի հարցաշարին առնչվող նորմատիվ իրավական ակտերի ցանկը ներկայացված են հետևյալ հղումով՝

https://charentsavan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1208

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն՝

Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցողները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից
/ «Համայնքային ծառայության մասին » օրենքի 11-րդ հոդված/:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1. դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
2. դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.
3. տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը համայնքային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը և գործառույթների իրականացմանը:
4. դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ վերացված չէ.
5. օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը՝ բնօրինակների հետ միասին, կարող են ներկայացնել հայտարարության մեջ նշված փաստաթղթերի ներկայացման համար նախատեսված որևէ հասցեով, ներկայացնելով՝

1. գրավոր դիմում. **(լրացվում է տեղում)**,
2. քաղաքացու դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն, իսկ փախստականի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճեն.
3. առնվազն միջնակարգ կրթության պահանջի դեպքում՝ կրթությունը հավաստող փաստաթուղթ (ատեստատ) պատճեն, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության դեպքում՝ դիպլոմի պատճեն.
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն.

5. արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի (բոլոր գրառում ունեցող էջերի պատճեն) կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն.
6. մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
7. հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը **(լրացվում է տեղում),**
8. հայտարարություն այն մասին, որ անձը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ **(լրացվում է տեղում),**
9. հայտարարություն այն մասին, որ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ **(լրացվում է տեղում):**

Հիմնական աշխատավարձի չափը.

Առաջատար մասնագետի թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը կազմում է 190000 / մեկ հարյուր իննսուն հազար / ՀՀ դրամ

Մրցույթի համար դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ **23.07.2026թ**.:

Մրցույթը կկայանա 2026 թվականի **օգոստոսի 11-ին ժամը 11:00-ին** Չարենցավանի համայնքապետարանի շենքում՝ 2-րդ հարկ, նիստերի դալիճում / ք.Չարենցավան Կ.Դեմիրճյան հրապարակ 1/:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10^{00}-16^{00}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, Չարենցավանի համայնքապետարանի շենքում /ք.Չարենցավան Կ.Դեմիրճյան հրապարակ, վարչական շենք, 202 սենյակ, հեռ. /0226/ 4-34-34, էլ. հասցե charentsavan.kotayk@mta.gov.am/ կամ ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն / ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ, վարչական շենք, հեռ. /0223/ 2-34-13, 2-73-01, էլ. հասցե kotayk@mya.gov.am/ :

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ